ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0025, Երևան, Նալբանդյան 130, գործավարություն, հեռ. 596-125

№ 27/1/89 «06» 03 2023 թ.

Ձեր

«Միլեն Շոու Փրոդաքշն» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ք. Գասպարյանին

ՀՐԱՎԵՐ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել **միջոցառումների հետ կապված ծառայություններ:**

Առաջարկվում է Ձեզ մատուցել վերոնշյալ ծառայությունները:

Գնումները ֆինանսավորվելու է **ՀՀ 2023 թվականի ոստիկանության բյուջեով** նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին և գնման ընդհանուր գինը չի կարող գերազանցել այդ գնման ֆինանսավորման համար նախատեսված հատկացումների չափը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն գնումներին մասնակցելու իրավունքը հավաստելու համար պատվիրատուին պետք է ներկայացվի հաստատված և ստորագրված հայտարարություն այն մասին, որ **«Միլեն Շոու Փրոդաքշն» ՍՊԸ-ն** ունի.

1.մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը
2. մասնագիտական փորձառություն
3. տեխնիկական միջոցներ
4. ֆինանսական միջոցներ
5. աշխատանքային ռեսուրսներ:

Ձեզ է ուղարկվում **ՀՀ Ո ՄԱԾՁԲ-2023-ՄՇԱԿՈՒՅԹ-Ա-24** ծածկագրով ընթացակարգի պայմանագրի նախագիծը:

Համաձայնության դեպքում անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ձեր կողմից ստորագրված և կնքված պայմանագիրը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ **Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**